# ԱՐՑԱԽԻ ԻՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ

## 1. ԻՆՉՊԵ՞Ս ԳՈՅԱՑԱՎ «ԱՐՑԱԽՅԱՆ ՎԱԿՈՒՈՒՄԸ»

Սկզբից ուշադրություն դարձնենք հետևյալ թվերին: Ինչպես վկայում է մարդահամարների վիճակագրությունը, 1939—1979 թվականների, այսինքն՝ 40 տարիների ընթացքում, Սովետական Ղարաբաղի բնակչության ընդհանուր թիվն ավելացել է 7 տոկոսով, 151-ից հասել 162 հազարի: Ընդ որում, այդ ժամանակաշրջանում հայերի թիվը մարզում պակասել է շուրջ 10 հազարով, մինչդեռ ադրբեջանցիներն ավելացել են շուրջ 23 հազարով: Չնչին տատանումներով այդ օրինաչափությունը պահպանվել է նաև վերջին շրջանում: Այսպես, 1970—1979 թթ. ընթացքում մարզի հայ բնակչության թիվը ավելացել է ընդամենը 2 հազարով, մինչդեռ ադրբեջանցիներինը՝ 10 հազարով, այսինքն՝ 5 անգամ ավելի արագ: Հայ բնակչության թիվն ըստ էության արդեն վաղուց տատել-կանգնել է մի կետի վրա, իսկ դա նշանակում է, որ նրա ամբողջ անելիքում է մարզը (մեխանիկական անի մասին խոսք անգամ չկա), իսկ մնացածն էլ ծեր կամ ծերացող բնակչությունն է:

Ըստ գոյություն ունեցող հաշվարկների, ինքնավար մարզում էր մնում հայ բնակչության բնական աճի հազիվ 10 տոկոսը, ուրեմն՝ 10-ից մեկը, մինչդեռ բնականոն զարգացման դեպքում Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության թիվը այժմ պետք է կազմեր լավագույն դեպքում 600 հազար, իսկ նվազագույն դեպքում՝ 300 հազար մարդ: Մինչդեռ 1988 թ. սկզբին հայերի թիվն այստեղ 150 հազարի էլ չէր հասնում:

Այդ վակուումը գոյացել է ոչ թե անսպասելի և միանգամից, այլ ադրբեջանական ղեկավարության երկար տասնամյակների ֆրանգաբան աշխատանքի շնորհիվ, որի հետևանքը նպատակն է եղել և մնում է Արցախի հայազրկումը:

Այս առթիվ անհրաժեշտ է բացահայտել և հասկանալ վերոհիշյալ վակուումի տնտեսական և սոցիալ-հոգեբանական բնույթը և դրա հիման վրա մշակել այն հնարավորին չափ արագորեն հաղթահարելու ազգային ծրագիրը կամ գոնե դրա ուրվագծերը:

Արցախի ամենաթույլ օղակը այսօր համարվում է Հադրութի շրջանը, որն ընդգրկում է նշանավոր Դիզակի մելիքության հիմնական մասը: Այդ հատվածը Հայկական ԽՍՀ-ից հեռու է ընդամենը 10—12 կմ, իսկ Իրանից՝ 20 կմ տարածքով: Թվերը վկայում են հետևյալը. 1921 թ. շրջանի բնակչությունը կազմել է շուրջ 30 հազար մարդ, 1940 թ.՝ 27,1 հազար, վերջապես 1988 թ.՝ 13,8 հազար մարդ: Այլ խոսքով, նախապատերազմյան տարվա համեմատ բնակչության թիվը նվազել է կիսով չափ: Շրջանի 46 գյուղերից վերջին կես դարի ընթացքում շուրջ վերացան, տասը վերացման եզրին են, մյուսների բնակչությունը խիստ կրճատվեց: Լքվեցին հարյուրավոր գյուղական տներ, ամայացան, դատարկվեցին աճուշակ, հազարավոր հեկտար պտղատու հողեր:

Շրջանի գյուղատնտեսությունը, հակառակ նրա բարենպաստ բնական պայմանների, զուրկ է ժամանակակից նյութատեխնիկական բազայից, նույնիսկ ոռոգումից (այն էլ՝ ջրային առատ պաշարների առկայության դեպքում): Շրջանն ըստ էության զուրկ է ժամանակակից հանապարհներից և կոմունիկացիաներից, եղած հանապարհները էլ անցնում են ադրբեջանական գյուղերի և շրջկենտրոնների միջով, որը դարձյալ միտումնավոր է արված: Երբ դրան ավելացնենք գյուղի բնակչության տարրական կուլտուր-կենցաղային պայմանների բացակայությունը, ապա պատկերն ավելի լրիվ կլինի:

Խծաբերդ գյուղը, ուր մնկնեցի ս/թ հոկտեմբերին ուսանողական շինչոկատի հետ, Արցախի հարավարևմտյան հատվածի, բերևց, ամենահեռավոր գյուղն է, միաժամանակ գրեթե հարևան է ՀԽՍՀ Գորիսի շրջանի Կոռնիձոր և Խնձորեսկ գյուղերին (արտահայտությունը՝ Ադր. ԽՍՀ Լաչինի շրջանի գյուղերն են): Խծաբերդն ունի 6—7 հարյուր տարվա պատմություն: Վերջին կես դարում (1939—1988 թթ.) գյուղի բնակչության թիվը կրճատվել է գրեթե 4 անգամ և այսօր չի անցնում 200-ից:

Վերացել կամ վերացման եզրին են Խծաբերդի հեռավոր տեղամասերի նախկին շեն գյուղերը՝ Թեխասարը, Քարինգը, Սպիտակաշենը, Պետրոսաշենը: Պատճառնե՞ր: Դրանց մի մասն ընդհանուր է երկրի համար, այն է՝ համայնական-հանրային գյուղատնտեսության կազմակերպումը և վարումը, որը մեծ վնաս հասցրեց գյուղին և երկրին, իսկ մնացածը կապված է ազգային հնչման հետ: Ընդ որում, այդ պատճառները դժվար է առանձնացնել, քանի որ իրականում դրանք գործել և գործում են հանախ միանյուսված:

Նախ ասենք, որ Ադրբեջանում և Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց և ԽՍՀՄ կազմավորումից անմիջապես հետո կատարվեցին վարչատերիտորիալ մի շարք տարածքային վերանայումներ: Այսպես, Թեխասարը և Հարար խոշոր հայկական գյուղերը, որ մինչև 1920 թ. մտնում էին Գորիսի շրջանի մեջ, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ ընտրեցելուց հետո հանվեցին այս շրջանի կազմից. առաջինը մտցրվեց Հադրութի շրջանի կազմի մեջ, իսկ երկրորդը (Հարարը), որն ուներ շուրջ 500 ծուխ, հայ բնակչությունը հայածելուց հետո մտցրվեց Ադրբեջանական ԽՍՀ Լաչինի շրջանի կազմի մեջ և, ի պատիվ Միր Ջաֆար Բաղիրովի, վերանվանվեց Ջաֆարարադ: Հարարը արագորեն հայաթափվեց:

Համատարած կոլեկտիվացումից հետո ոչ պակաս ավերիչ հետևանքներ ունեցավ գյուղերի ու տնտեսությունների խոշորացման հակագիտական քաղաքականությունը, որն իրականացվեց նույնպես հակաժողովրդական եղանակով ու միջոցներով: Այդ ժամանակների կենդանի վկաներն են ամայացած կամ մարող գյուղերի՝ հրաշքով փրկված հատ ու կենտ բնակիչները: Նախ՝ 1935 թ. միացվեցին Քարինգի և Սպիտակաշենի կոլտնտեսությունները, իսկ հետագայում (1950 թ.) շարունակելով այդ գիծը, դրանք էլ միացվեցին Խծաբերդի հետ մեկ միասնական տնտեսության մեջ, որով էլ ավելի արագացավ գյուղերի քայքայման ընթացքը: Միաժամանակ Գորիսի սահմանամերձ Թեխասարը գյուղի բնակիչները (500-ից ավելի) բռնի կերպով տեղահանվեցին և փոխադրվեցին այլ գյուղեր, սակայն իրականում դրանց մեծագույն մասը լքեց շրջանն ու մարզը, մի շնչին մասն էլ մնացին Խծաբերդում: Այժմ էլ Թեխասարը անմարդաբնակ է:

Այս բոլոր վերանայումների, խոշորացումների և միացումների հետևանքով տուժեցին բոլոր հայկական գյուղերը, ոչ միայն վերացվածները, այլև մնացածները, տուժեց ամբողջ շրջանի հայությունը:

Եվ այսպես, Հայաստանի և Արցախի սահմանագլխի այս կարևոր հատվածում, ուր նախապատերազմյան 1940 թ. գոյություն ունեին երկու խոշոր հայկական գյուղեր՝ շուրջ 2000 բնակիչներով, սոցիալական և ազգային վերանայումների հետևանքով այսօր ունեն ընդամենը 200—230 բնակիչ: Հայաստանը և Արցախը կապող այս գյուղերը վերացան, նրանց կապող կենդանի օղակը բուլացավ:

Թե ազգային հնչումը ինչ դեր է խաղացել Արցախում, վկայում է հետևյալ տխուր պատմությունը: Հայկական շեն գյուղ էր Հադրութի շրջանի Հողերը, որն ուներ 450—500 բնակիչ: Արցախի շատ գյուղերի նման բրի օրի բռնելու համար նա հարկ էր տալիս պետությանը: Հարևան Ֆիզուլիի շրջանի և ոչ մի գյուղ նման հարկ չէր տալիս: Եվ ահա «ընդառաջելով» մի քանի օրապակաս հողերցի պաշտոնյաների դիմումին, Ադր. ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով Հողեր գյուղն իր առատ այգիներով ու դաշտերով 1936 թ. հանվում է Հադրութի շրջանից և տրվում հարևան Ֆիզուլիի շրջանի ենթակայությանը: Հետևանքը չուշացավ. գյուղը սկսեց հայաթափվել: 1988 թ. սկզբին այնտեղ մնացել էր 22 հայ ընտանիք, իսկ նույն թվականի ավարտին այդ գյուղից հեռացավ վերջին հայը:

Հադրութի շրջանի հարավարևմտյան հատվածի 7 գյուղերում (Խծաբերդ իր տեղամասերով, Հին Թաղեր, Դալաբլար, Խանգածոր) այսօր ապրում է ընդամենը 572 բնակիչ: Մի սար կամ մի ձոր այն կողմ հարևան Լաչինի շրջանի 13 ադրբեջանական գյուղերն են՝ իրենց ավելի քան 3 հազար բնակիչներով և անթիվ-անհամար անասունների գլխաքանակով և ԵՐԵՔ ԱՆԳԱՄ ԱՎԵԼԻ ՔԻՉ ՀՈՂԱՏԱՐԱԾՈՒԹՅԱՄԲ: Դժվար չէ հաշվել, որ հայկական գյուղերի առկա բնակչության մեկ շնչին առնվազն 10 անգամ ավելի շատ հողատարածություն է բնկնում դիմացի ադրբեջանցիների համեմատ: Այսպիսով, գոյացել է յուրօրինակ տնտեսական նասրություն (վակուում), որը երկար ժամանակ գոյություն ունենալ չի կարող, քանզի, ինչպես ժողովուրդն է ասում, «սուրբ տեղը դատարկ չի մնում»: Կյանքը ցույց է տալիս, որ գոյացած տնտեսաաշխարհագրական հիշյալ վակուումը վաղ թե ուշ պետք է լրացվի (լցվի) որևէ մեկի կողմից, թե ինչ եղանակով ու ձևով, դա այլ հարց է: Մատնանշեմ թեկուզև մեր երկրի Հեռավոր արևելքում Չինաստանի հարևանությամբ վաղուց արդեն գոյացած տնտեսական վակուումի ճակատագիրը: Հայտնի է, որ իր ժամանակին մեր երկիրը վճռականապես մերժեց այդ հողերի մի զգալի մասին տիրանալու՝ Չինական ժողովրդական Հանրապետության պահանջները: Սակայն ոչ ոք չի կարող մերժել ընդդիմանալ տնտեսական ինքնազրացման օբյեկտիվ օրենքներին, որոնք իրենց ճանապարհն են հարթում հակապես խաղաղ թափանցման եղանակներով և ձևերով, ենթադրյալ շրջանցելով ամեն տեսակի վարչական օրենք և արգելք: Դրա վառ օրինակը դարձյալ նույն չինացիներն են տալիս: Նրանք վերջին տասնամյակում պայմանագրային հիմունքներով փոխադրվում են խորհրդային Հեռավոր արևելքի շրջաններ և ակտիվորեն մասնակցում դրանց բնական ռեսուրսների տնտեսական իրացմանը, մի բան, որ փոխշահավետ է և՛ խորհրդային, և՛ չինական կողմերին:

Քիչ է ասել, թե մեր ադրբեջանցի հարևանները աչք ունեն արցախցիների հող ու արտին: Նրանք վաղուց արդեն օգտվում են այդ հողերից բարիդրացիական, «Ռուվայական» անշահախնդիր պայմանով, իսկ ավելի հանախ՝ հայկական գյուղերի անասունների բալանի ու ավարի ձևով (բնդ ստրում, չեն խորշում անգամ խաղերի բալանից, բոդ պլանն այդ մասին իմանա), որը Մարքսը ժամանակին որակել է որպես «բարբարական առևտրի միակ ձև», և որը այժմ էլ տեսնում ենք Ջանգեզուրի ու Արցախի սահմանամերձ գյուղերում:

Տնտեսական վերոհիշյալ վակուումը չեն կարող լրացնել ուսանողական շինչոկատները: Այն պետք է լրացվի մշտական բնակչությամբ: Ուրեմն՝ անհրաժեշտ է մշակել Հայաստանի լեռնային շրջանների և Արցախի լիարժեք բնակեցման ազգային ծրագիր և անհապաղ ձեռնամուխ լինել դրա իրագործմանը:

**Ն. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ**
ԵԺՏԻ քաղաքատնտեսության ամբիոնի պրոֆեսոր